ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

28 նոյեմբերի 2016 թվականի N 186-Ա

Հ. ԱԴԱՄՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>> կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 18-րդ կետի <<գ>> ենթակետի և հիմք ընդունելով *Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2016 թվականի նոյեմբերի 25-ի N 01/14/6/3774-16 գրությունը՝* **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի *(ծածկագիր՝ 66-2.1-4)* քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար ***Հերմինե Սարգսի Ադամյանի*** հետ 2016 թվականի օգոստոսի 23-ին կնքված *N 67* ժամկետային աշխատանքային պայմանագիրը համարել լուծված 2016 թվականի նոյեմբերի 28-ից:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի *(ծածկագիր՝ 66-2.1-4)* լիազորությունների իրականացումը, *մինչև վեց ամիս ժամկետով,* դնել կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ *(ծածկագիր՝ 66-2.2-25)* ***Արա Պարույրի Սիմոնյանի*** վրա՝ մինչև քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարությանը *(վարչատնտեսական բաժնին)* Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել հանձնման-ընդունման աշխատանքները և ներկայացնել համապատասխան արձանագրություն:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)* կատարել վերջնահաշվարկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի նոյեմբերի 28
ք. Հրազդան